

ԲԱԺԱՆՈՂՅԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պուշկարիոյ համար  
 Տարեկան 12 Ֆր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արսասահմանի հա-  
 մար Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 ֆր.  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵՐԸ  
 Դասնուցման տղոց առաջին  
 քրեակն համար 40 սանթիմ  
 է. իսկ վերջին երեսի հա-  
 մար 20 սանթիմ է. երեքին  
 սեղի սեղաններու համար  
 20 Օլց զեղը կըլլայ:

# ՇԱՐՋՈՒՄ

Համակ եւ դրամ դրկեզ  
 Խմբագրութեան հասցին  
 —  
 Редакция на ввстникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)  
 —  
 Գրութիւնք եւ լին տրուե-  
 ր  
 Արսասահմանի մեքէ  
 ( 20 ՍԱՆԹԻՄ )  
 Պուշկարիոյ համար մեքէ  
 ( 15 ՍԱՆԹԻՄ )

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Վառնայի համար մեքէ 10 սանթիմ

Ստիպողաբար կը խնդրենք մեր բաժանորդներէն, որպէս զի բարեհաճին իրենց ներկայ տարուան բաժնեկիները խմբագրութեանս ուղարկել:

Այս առթիւ կը յիշեցնենք նաեւ անոնց որոնց մասնաւոր նամակներ զրկած էինք նախորդ շրջանին բաժնեկիները պահանջելով, թէ այլ եւս առանց սեւ նկատողութեան պիտի հրատարակենք իրենց անունները եւ հասցէները իբրեւ անբարեխիղճ խաբեբաներու:

## ԿՐԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պետութիւնները իզուր կը ցանկան որ Արեւելքի յաւիտենական խնդիրը զիրենք հանգիստ թողու կամ գէթ քիչ մը գուլ ու դադար տայ իրենց: Ամէն կողմէ գծուարութիւններ երեւան կու գան, որոնք կամայ ակամայ իրենց ուշադրութիւնը օտմանեան կայսրութեան վրայ կը հրաւիրեն, եւ որոնք իսկոյն վրդովեցուցիչ հանգամանք մը պիտի առնէին, թէ՛ Եւրոպայի խաղաղութեան եւ թէ՛ մարդկային ընկերութեան խղճին տեսակէտով, եթէ դիւանազնութիւնը՝ գէպքերէն մը դուրս ելլով՝ ժամանակը կանխէր կամ կեղծ ապահովութեան մը մէջ քնանար:

Նոյնիսկ թուրքիոյ կեդրոնին, Կ. Պոլսոյ մէջ այլ եւ այլ միջապէսներ, որոնց ամենէն ազդեցողը օտար թղթատարութեանց շնորհիւ փորձը եղաւ, բուն կերպով զբաղեցուցին դահլիճները: Յունական պատրիարքին հրաժարականը երեւան բերաւ օրթոտոքս եկեղեցւոյն եւ Բ. Գրան մէջ ձգտեալ վիճակ մը ցաւալի գրեգորհութեան:

Խույ աղմուկներ չեն գաղտնիք շրջելէ այն յուզումներու մասին, որոնք վը տիրեն Փարս Ասիոյ մէջ եւ այն վառագնբուն համար՝ որոնք առկալ կը սպասեն զրեքազգ հայ ժողովուրդին մնացորդներուն զլխին:

Մակեդոնիոյ մէջ, մտքերու յուզումը չէ պակաս: Այն ճիշիչ միջոցները զորս թուրք կառավարութիւնը հարկ տեսաւ գործադրել, պետութեանց առիթ տւին անանկ գիտողութիւններու որոնք թերեւս մինչեւ Պերլինի դաշնագրին հիմնական մէկ քանի կէտերուն եւ բարենորոգմանց խնդիրները պիտի շոյափէին:

Հակառակ պուլկար կառավարութեան ցոյց տուած հլուութեան եւ Մակեդոնական կոմիտէին վրայ գործադրուած ճնշումին, չենք կարծեր որ իշխանական երկիրը գործողութեանց կեդրոնը կամ գոնէ դժգոհ ազգութեան մը յայտնեցողութեանց ինչնեւրոն ապաստանարանը ըլլալէ պարզ է, եւ ոչ ալ Պուլկարներու, Սերպերու, Փուլաւաքներու հակառակութիւնը կը ցած է մարեցնել ժողովրդին ինքնավարական ցանկութիւնները:

Միեւնոյն ատեն, Ալպանիան կը սկսի զբաղեցնել թէ՛ թուրք կառավարութիւնը եւ թէ՛ դրացի իշխանութիւնները: Նովի-Պազարի մէջ անկարգութիւններ պատահեր են, որոնց մասին դեռ կատարելագէտ լուսաբանուած չենք: Վիէնայի եւ Հռոմի մէջ վէճեր ծագեցան, որոնք ի յայտ բերին երկու պաշտպաններու նախանձոտ պահանջները եւ իրենց գոյզն վստահութիւնը statu quo ի կայունութեան վրայ:

Ու այս բոլոր անձկութեանց՝ կրետէն կուգայ նոր մըն ալ աւելցնելու Ոչ մէկուն համար գաղտնիք մը չէր որ Քանտիան, իր նկատմամբ ընդունուած քիչ մը խորթ լուծումէն ի վեր, լիապէս գոհ չէր նրեւար: Իրաւամբ կամ յանիրաւի յոյն ժողովուրդը, որ այս կղզիին անբաղաճելի մեծամասնութիւնը կը կազմէ, գոհ չէ թուրք գերիշխանութեան տակ իրեն տրուած ինքնավարութենէն:

Երբեմնի ապստամբութիւնները կատարուեցան յանուն Մեծ Գաղափարին, այսինքն Միջերկրականի արեւելեան ապանին մէջ հելլենական միութեան ամբողջական վերահաստատումին:

Այս ցեղը, որքան ալ գործնական, վաճառական, ճարտարարուեստ երեւայ, հիմնապէս իտեալիստ ցեղ մըն է: Անիկա կը յիշեցնէ, իր այս նկարագրով, հնութեան Հելլեններուն նկարագիրը, հակառակ դարերու ընթացքին մէջ յառաջ եկած փոփոխութեանց եւ ցեղերու խնամութեան, այն Աթէնքին, քաղաքակրթութեան միակ ծաղիկն, ուր իրապաշտութիւնը կը փրթթէր գեղեցկին, փառքին եւ ազատութեան սիրոյն մէջ, եւ ուր Պերիկլէս ժողովուրդը կը կառավարէր եւ կառաջնորդէր առանց պաշտօնական իշխանութեան, Ակորաի բեմին վերեւէն, իր պերճախօսութեան եւ մեծ գաղափարներուն միակ ուժով:

Ազգերու խառնուածքները չեն փոփոխիր: Կրետացիք կը տառապին Սուլթանին ճորտերը ըլլալուն, մինչդեռ հելլենական թաղաւորութեան պէտք էր պատկանէին:

Կղզիին կառավարիչը, որ միանգամայն չորս միջամտող պետութեանց վերին ներկայացուցիչն է եւ Յունաստանի արքայական ընտանիքէն իշխան մը, իրարու հակառակ պարտականութեանց մէջ բռնուած կը մնայ, ու որոշած է իր ժողովրդին եւ հայրենիքին կողմը բռնել: Այս ձմեռ արեւմտեան Եւրոպայի մայրաքաղաքները պտոյտ մը ըրաւ, զահլիճներուն արամագրութիւնները շոյափելու եւ նոր Արեւելեան Բուլղարիի գէպք մը կրկնելու համար:

Բայց իր դիտումները նպաստաւոր ընդունելութիւն մը չի գտան: Արեւելքի մէջ պետութեանց նշանաբանն է սախօքը. «հանգստութիւնը թող չի վերդոյժուի», նոյնիսկ երբ հանգստութեան տեղ «անհանգստութիւն» գրել հարկ ըլլայ. երբք գործը ձեռք չառնել, նոյնիսկ, եթէ իրենց ձեռնպահութիւնը աւելի ծանր տագնապներ յառաջ բերէ:

Վերագառնելով իր երկիրը, Երկիրու ազգային ժողով գուժարեց եւ հոն շուտով յայտնուե-

ցաւ որ քրիստոնեայ մեծամասնութիւնը միայն մէկ կէտի մը մէջ գերազանցօրէն համաձայն էր, եւ այդ կէտը Յունաստանի հետ միութիւնն էր:

Հակառակ պետութեանց վհատեցուցիչ ընթացքին, իշխանը հաղորդեց անոնց այս միաձայն իղձը եւ ստացաւ այն պատասխանը զոր արդէն կանխատեսած էր:

Չորս պետութիւնները յայտարարեցին թէ հաստատագէտ որոշած են, աշխարհի արդի կացութեան մէջ, նկատի ունենալով իրենց յանձնառութիւնները Դրան հանդէպ, պահպանել կրէտէի մէջ statu quo. իրենց համար կրետէի արդի ընթացքը ամենէն յարմարագոյնն է: Պետութեանց պատասխանը կը վերջանար կոչում ընելով իշխան Երկիրու բարձր զգացումներուն, որպէս զի իր պաշտօնէն չի հրաժարի եւ չի կնձռտէ գէպքերը:

Պետութեանց պատասխանին այս վերջաբանը ցոյց կուտայ որ, անոնք զէթ կացութեան վստահներէն մէկուն լիապէս գիտակցութիւնն ունին: Իշխանին հրաժարումը կղզին անկարգութեանց մէջ պիտի նետէր, եւ թերեւս թշնամութեանց առիթ պիտի տար: Եւ եթէ նոյնիսկ իշխանը այս իմաստուն խրատներուն տեղի տայ, սաղնապը ժամանակ մըն ալ պիտի երկարի, ներկայ տարուոյն հետ կը վերջանայ կղզիին կառավարչին պաշտօնավարութեան ժամանակամիջոցը, եւ երբք հաւանականութիւն չի տեսնուիր որ Երկիրու կրկին յանձն առնէ՝ ստանկ զժողով գործ մը, ստանց ստանալու այն պայմանները զորս ինք անհրաժեշտ կը գատէ կղզւոյն բարօրութեան ու անդորրութեան համար:

ԹԱՆ

# ՆՈՐ ՀԱՆԴԵՍ ՍԸ

«ԺՈՂՈՎՈՐՈՒՄԻՆ ՀԱՍՏԱՐ»

(Շար. նախորդ թիւին)

«Մենք հայ ենք... ճիշդ պէտք է ամեն հայու սրտի ճամբան գտնել: Ներկայ աղետաւոր եւ օրհասական ժամուն, մեր ժողովրդին ծով թրչու առու թեման առջեւ, պէտք է մեր զգայուն երիտասարդները, ինչ դաւանանքի ալ պատկանին, չի լքեն հայ ժողովուրդը՝ որ թերեւս իր տարապան տատապանքին մէջէն, դեռ սփոփանք մը ունի եւ հատաք մը՝ իր լուսաւորուած կրթութեամբ զաւակներու սիրոյն ու գործունէութեան վրայ: Մարդկային դժբախտութեանը ամոքել կուզենք. ահա առջեւն իս մեր ազգը, ուրկէ ու եւ սոփեստութիւն մեզ չի խրատեր դատարիք ըլլալ:

Կեղեցիկ թուի մըն են սատարներ որոնք կը պնդան են մեր հաւատքի զպանակը. «ինչ ալ ըլլայ, անհրաժեշտ է լուսագոյն ապագայի մը կենսական հաւատքը»:

Բայց աւելի թերթին հետեւելիք ուղղութիւնը, որ անկախ պիտի ըլլայ, ըստ յօդուածագրին սա առջեւուն մէջ է. «Մեր անմիջական գործը պիտի ըլլայ, ժողովուրդին ալ իր վիճակին ճշգրիտ ճանաչողութիւնը, անոր դարձնել իր ճակատագիրը իր ձեռքով վարելու բանարարութեամբ իրաւունքը, անոր ցաւաւ ու թմրած հոգին արթնցնել ինքնարեւոյն ու կամաւոր ընդվզումներու»:

— միակ հատուածը որ կը համապատասխանէ թերթին տիտղոսին հասարակական ներքին ըմբռնումին: Անհատական նախաձեռնութեան կոչ մը, որ լռելեայն կամ անտեսօրէն կանցնի հաւաքական շարժման թէօրիին վրայէն: Անջատական գործունէութիւնը, քաղաքական եւ փիլիսոփայական վերին աստիճանը ապագայ ընկերական կեանքի, ազգայնական-քաղաքական գոյութիւն չունի, այսինքն չունի աշխարհութիւն: Խրատութեամբ սակայն ինքնագործութեան ոգին, որուն հասնելու համար գուցէ դեռ շատ

փութ հաց ուտելու ենք, ինչպէս նոյնիսկ մեզմէ շատ առաջադէմ ազգեր, պէտք էր այդ անջատութեան մէջ տիեզերական ձգողութեան օրէնքն ալ դրուել, ներդաշնակ եւ աշխատակից օրկազմիդ մը առաջ բերելու համար: Ի՞նչ ըսել է իր ճակատագիրը իր ձեռքով վարել, որոշ կազմակերպութիւն եւ հաւաքական ուժ պահանջող հարցի մը մէջ, երբ այնքան փափուկ եւ բարդ վիճակ մը կը ներկայացնէ եւ իրեն դէմ ունի քաղաքական կամ պետական պատճառներէ՞ առաջնորդող թշնամի մը: Անհատական պարտաճանաչութիւնը հաւաքական պարտաճանաչութիւն յստաջ բերելու է, ինչ որ զանց բրուած է անհատական գործունէութեան փառաբանումին մէջ: Միթէ՞ մեր գործիչները ժողովրդին զաւակները չեն, իրենց ճակատագրին գիտակ:

Յօդուածին մէջ քանի մը criterium կրնաք գտնել, բայց դժուար է առջի թիւէն լճուկ թերթի մը բուն արժէքը եւ յստակ ուղղութիւնը, երկրորդ, երրորդին, աւելի պիտի պարզուին «մարմնաւորիչ տեսակետերը, համոզմունքները»: Ինչ որ մեզի կը յուսադրէ ան է որ, հոն չեն փառափայլի երբեմնի ոլիմպիական հպարտութիւնը, արհամարհանքը, ժամանակի խորհուրդը եւ փորձառութիւնը իրենց տեղը ունին «պաղափարական մաքառումներու նուիրական ճամբուն մէջ»:

Իրաւ է Պօլիսը երբեք չէ տուած գաղափարական մաքառումի հերոսներ, եւ խօստովանինք որ նոյնիսկ գաղափարը չէ հասկցում ինչ, եւ չէր ալ կրնար ըլլալ այնպիսի միջավայրի մը մէջ գաղափարական հոսանք եւ պահանջ: Հին եղած են ծիծաղելի ժամանցի մարդեր, յուսաւոր նկարագիրներ, աշխարհի մէջ ինկած փէրուչան սկեպտիկներ, ունայնամիտներ, սլքտի cabotinներ, ուրկէ առաջ եկած են յիշելու եւ աննկարագիր հոգիներ: Ահա թէ ինչո՞ւ համար կսպասենք որ նոր սերունդը, առանց մեծ յատկութիւններ ունենալու, բոլորով իտէլի մը—եթէ կուզէք մեծ իտէլիան—

չուրջը, տեղեկու հին ցատագին աշխարհին դիմաց—ուր կան բարոյական փճացումներ միայն—նոր, անձնուէր, անմեծամիտ եւ իսկական մաքուր իտէլիով արեւափայլ մթնոլորտ մը, առանց հրապուրուելու շիրիմ նենդամութիւններէ:

Թերթին մէջ օգտակար ըլլալու տենչը եւ փառասիրութիւնը կերելի, գիտակցութիւնը մեր անհուն ցաւերուն, բայց կեղերնախոյս եւ անկախ ըլլալու իրենց «ժխտական դրական» գիրքին մէջ, — որ հմուտ եւ անաչառ քննադատութեան մը ոգին կը պահանջէ—մի գուցէ այլասերին, ինչպէս միւս թերթերը եւ մոլոր փառասիրութիւնով մը յարտեան իրենց եսասիրութեան... սխիֆի ժայռը գորցնեն:

Յանկալի է որ թերթը, հետո այգ գործը ձգտումներէն, որ իրեն ատած «պառակտու մի սատարներն են երբեմն» պիտի ըլլայ կրթիչ ու ապագայի «կենսական հաւաքքը» ներշնչող մաքուր օտկան մը, դրական կենդանութիւն մը առլով մեր սնամէջ եւ սեթեւեթ գրականութեան, հետեւի մեր ժողովրդին հերոսութեան խիզախութեան, սրտտեղով զայն իր ազատագրութեան վրէժին ու մոլեգնութեան մէջ: Իրաւ է Յեղափոխութեան աստղը շատ բարձր չէ եղած, բայց նսեմ ալ եղած չէ: Յեղափոխութիւնը ճախրայ ելած է, ալ չէ կարելի կեցնել զայն: Այն օրը, երբ յեղափոխութիւնը կը մեռնի մեր մէջ, մենք մեր ձեռքերով կը փորենք մեր մուկ գերեզմանը:

Երկրորդ յօդուածը պատմական լուսաբանութիւն մըն է հայ ցեղի ծագման եւ անկման մասին: Շահական է անով որ մեր պատմութեան ուսումնասիրութեան վրայ սկսած ենք փիլիսոփայօրէն նայել, ժողովուրդ մը ստեղծող եւ կործանող պայմանները աչքի տեսլ ունենալով: Մեր աշխարհագրական դիրքը եւ այլազան ջեղերու, քաղաքական յանցաւորներու հոն ապաստանիլը, մեծապէս օգնած են մեր անհատապաշտ եւ ապակեղոն քաղաքական կազմութեան:

«Դարավերջին առթիւ» յօդուածը

հապճեպով գրուած, սրտառու շփոթաւորութիւնով մը: «Ձանքի մէջ գորզողին պարտինք ընել, երիտասարդները որոնք աշխարհի չորս անկուններէն, հայրենիքի վերականգման իտէլիան ծառայելու համար միացած՝ կը հիմնեն այս թերթը եւ չունին ուրիշ յաւակնութիւն, բայց միայն բերել իրենց համեստ ու անկեղծ բաժինը»:

Այս խօսքերը ուղղուած հայ ազգին «ազնուացած իր դարաւոր ցաւովը», գրաւական մըն են հայ երիտասարդութեան մէջ առաջ եկած մեծ բարեշրջումին, ապրող ու ապրեցնող գիտակցութեան վերածնունդին:

Ս. Մ.

(Շարունակելի)

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

«Իրաւունքի 37 թուոյն մէջ, Թիւրքիայէն երաժշտական երեկոյթի մը առթիւ գրուած թղթակցութեան մէջ, կարգացի քանի մը շարամիտ եւ սուտ տեղեկութիւններ անձիս նկատմամբ. լսեցի նաեւ որ նոյն երեկոյթին բացման պահուն, Տիար Շահրիման բեմէն նոյն իմաստով յայտարարութիւն մըն ալ ըրել է:

Թէ՛ վառնայի թէ՛ Թիւրքիայէն մասնակցած եմ ազգային հաստատութեանց ի նպաստ տրուած հանդէսներու եւ ներկայացումներու, ամէն անդամ բեր ինծի դիմում եղած է, եւ առի ըրած եմ չէ թէ գովեստի կամ ծաղկեփունջի ունայնամիտ ակնկալութեամբ, այլ պարզապէս պարտականութիւն մը կատարած ըլլալու համար:

Վերջին անգամ Թիւրքիայէն մէջ տրուած այդ երաժշտական երեկոյթին եւս մասնակցելու խօսք տուած էի, բայց հանդէսէն քանի մը օր առաջ, հասարակաց

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿՐ ԽՂՃԱՆ, ՈՉ ԿՐ ՍՄԵՆ

IV

(Շար. նախորդ թիւին)

Սթրանճան ամենուն կերակուր լեցուց եւ քանի մը շիշ գինի սեղանը դրաւ: Ընթրիքը սկսաւ: Խօսակցութիւնը ներկայացուցի շուրջը կը գուռներ: Գոլեստներ քննադատութիւններ, իրաւ ու անիրաւ գիտողութիւններ ու ծիծաղներ:

Ամէնքն ալ զուարթ էին: Բայց ամենին շատ Սթրանճան: Ան Մաքէտօնսքիին յանդգնութիւնը գովեց, եւ ուղղափառութեան վերաբերեալ քանի մը նկատողութիւններ ըրաւ: Մինչեւ իսկ կամացուկ մը զգացնել տուաւ թէ երկրորդ ներկայացումին աւազակապետ ժէլիւի գերը ինք կը բազմար ստնել: Բան մը որ Մաքէ-

տօնսքիին երեսը տխրեցուց:

Երբ որ սաները, պնակները, շիշերը պարպեցին, ինչպէս նաեւ պիւֆէէն չը ծախուած ու ես դարձուածներն անհետացուցին, Մաքէտօնսքիին որ հիմա աւելի դիտակցօրէն իր նշանակութիւնը զգաց, գոչեց.

— Տղաքներ, կառաջարկեմ, Շթրաուզին երթալ, լաւ իրիզէնի գարեջուր ունի:

— Երթա՛նք, ինը ամիս կայ որ չեմ գացած:

— Հայտէ, երթանք... թող գըլխարկը բիրի (սօքա) վրայ (՛) ըլլայ:

— Սթրանճա, ցտեսութիւն, չե՞ս սեզեր գալ:

— Ցտեսութիւն, գիշեր բարբ, Սթրանճա:

— Բարբ ուրախութիւն:

Ու խուժը գինետունէն անհետացաւ:

Շուտով փողոցի մէջ որոտագոչ ու միաձայն երգ մը թնդաց եւ կամաց կամաց գիշերուան ու հեռաւորութեան մէջ կորսուեցան:

Աստուծ գիշերուան ներկայացումի հասոյթէն բան մը չէր մնացած:

(՛) Անհողութեան նշան:

Սուլթան Ապաիւ Ապիզ փրկուած էր:

V

Երկու շարաթներ անցած էին: Մաքէտօնսքիին առանց մէկու մը իմաց տալու, անհետացած էր: Բըջքով, որ Մաքէտօնսքիին տարօրինակ ողորմածութեամբ իր գոյութիւնը կը պահէր, մէկէն ի մէկ առանց միջոցներու մնալով, առաջին անգամ ըլլալով ատ անգութ պէտքերն—սովին հնթարկուեցաւ: Իր հայրական տունը ըքած օրէն, տաղին անդամ էր, որ կը զգար անախորժութիւնը իր նոր ասպարէզին, որ հետունէն մատուց ու խնդրէր զլուսի մը աշխարհ հետաքրքրաշարժ ու հրապուրիչ կեյեւար: Երկու երեք օր հաւաքի անունով Սթրանճանէն կերաւ, ինչպէս հաճին ու Բօբլէթօն, բայց հիւանդութիւնը մէկէն անկողին պառկեցնելով Սթրանճան, թէ Պրըջքով, եւ թէ հաճին ու Բօբլէթօն անօթի մնացին: Մէկէն իտարիկը մարեցաւ, ուր այնչափ հաճոյքով լուրիտան կեւար: Ամանները, պնակները, խառնիխոռն անլուայ գաւաթները սեղանին վրայ

խոնուած էին եւ փոշիի հաստ խաւ մը զանոնք կը ծածկէր: Սմայութիւն, անկարգութիւն կը տրէր գինետան մէջ, որ ժամանակ մը այնչափ աղմկոտ էր ու բաղձամարդ:

Հաճին գնաց արուստէ մը գրամ անուելու, ինչպէս որ ինքը կըսէր, բայց դեռ չի վերադարձաւ: Կը թուի թէ չի կրցաւ յաջողիլ: Բօբլէթօն շատ սպասեց, այսինքն գինետան մէջ երկու օր անօթի մնաց, յետոյ կորսուեցաւ, բախտ փնտաւրու համար: Սթրանճան Պրըջքով մաց, ան սրտեց չի գտուիլ ու Սթրանճան խնամել Չէր կրնար ատ քաջ հոգին լքել—առանց միջոցներու—եւք միջոցներ չունէր, բայց առանց բարոյական աջակցութեան, Սթրանճան, որ սաստիկ կը հազար եւ կը հեւար, չէր ուզեր եւ չէր ալ կրնար բան մը ճաշակել, շիււանդին ախորժակի բացակայութիւնը Պրըջքովին համար համարեալ թէ ուրախութիւն մըն էր, որ ժուժկալաբար սովին սողալով, չի պիտի կրնար հոգեվարքին անօթութեան տանջանքներուն ալ ակնատես ըլլալ: Եւ իրօք Սթրանճանի դէմքը օրէ օր կը սոգունէր եւ մահուան դաշկութիւնը կտանէր, աչքերը ջինջ ու

զբօսավայրի մը մէջ յակարծ հիւանդացայ և տուն փոխադրուեցայ . զիս խնամող բժիշկ Միշքօֆ խստիւ արգիլեց ասունէն դուրս ելլել , և ես չէ թէ երեկոյթէն կէս ժամ այլ ամբողջ երկու օր առաջ հանդէսը կազմակերպողներէն զիս տեսնելու եկող Տիկին Եահրիմանեանին , Օր. Բանդրիկեանին , Օր. Երուանդեանին , Պ. Պ. Նիշմանեանին և Երուանդեանին յայտնեցի թէ անկաջելի պիտի ըլլայ իմ մասնակցութիւնս . հանդէսին օրն իսկ առաւօտեան մերժումս կրկնած եմ Տիկ. Հոսիկեանին , Օր. Բանդրիկեանին , Պ. Յ. Առտարճեանին և խնդրած եմ յետաձգել երեկոյթը եթէ կարելի չէ ուրիշ կերպ ընել :

Հետեւաբար ինչպէս կը տեսնէ հայ հասարակութիւնը , թէ՛ թղթակցութեան մէջ գրուած և թէ՛ անուղիղ խօսակցութեան մէջ զրուած և այլ բարձր նիւթերու վրայ ճառաբանելու սուրճը չը փախցնող Տիար Եահրիմանեանին յայտարարութիւնը բացարձակապէս սուտ է :

Աւելորդ է ըսել թէ թղթակցութեան մէջ ստորագրուած և ինձ վերագրուած խօսքերը խեղաթիւրուածներ են , Բայց թէ ինչո՞ւ մերժումներս կէս ժամ առաջ միայն լսած ըլլալ կը ձեւացնեն և հիւանդութիւնս պարապ կարծեցնել կաշխատին , ինչո՞ւ այդչափ չարամտութիւն ու խեղաթիւրում , առողջ չեմ ուզեր հետաքրքրուիլ անգամ :

Բեփոռնի Ա. Թաւրիւսեանց  
Ֆիլիպէ , 9 Յունիս

Յ. Գ. — Տիար Եահրիման իր յայտարարութեան մէջ փոխանակ անունս և մականունս տալու զիս կոչած է «Մեր Տիկին Բիանիստողը» :

Առիական այդ կոպտութենէ չեմ՝ վշտանար , յուսալով թէ Տիար Եահրիման եւրոպական երաժշտութեան կարեւորութիւնը արգէն ըմբռնած ըլլալով զուցէ քիչ ասենէն ըմբռնէ նաեւ եւրոպական քաղաքավարութեան ամենատարրական պայմաններու անհրաժեշտութիւնը :

Մէկ օրինակ ալ զրկուած է «Իրաւունք» :

ՆՈՅՆ

**ՅԱՐԳՈՅ ՏԻԱՐ Յ. Փ.**

Կարգացի ձեր ինծի ուղղած նամակը , կը փութամ պատասխանել : Ուսուցչական ժողովը իր փէրդ նստին մէջ որոշեց իմիջի այլոց կիրակի օրերը չը կատարել քննութիւն . այդ օրերը վարժարանական զբաղումներէ դուրս նկատելով : Հետեւաբար ցաւ է ինծի յայտարարել ձեզ թէ՛ ձեր առաջարկին գոհացում տալու անկարելիութեան մէջ կը պնտուիմ :

Իսկ եթէ փափաքող էք ներկայ գտնուիլ հարցաքննութեանց , յուսով եմ որ պիտի խորհածիք ձեր առօրեայ զբաղումներէն մէկ քանի ժամ զոհել եւ գալ վարժարան , որով զիրար ճանչնալու բարեբախտութիւնն եւս պիտի ունենանք :

Տնօրէն  
Վառնայի Ազգ. Երկօսեռ  
Վարժարաններու  
Սեփական Ապագան  
Վառնա , 11 Յունիս

**ՀԱՅՅԵՐԻ Ի ԹՈՒՐԿԻԱ**

«Արշալոյս»-ի մէջ հետեւեալը կը կարդանք :

«Փառ Տ'Ալէքսանտրի» Տամանուրի իր մէկ բաժանորդէն ստացած նամակէ մը , որ Մերօրինէն եկած է , հետեւեալը կը քարդէ Անաստուրի թուրքերու և

քրիստոնեաներու մասին : «Մանուանդ հայերը հաւաքազօրեայ կեղեքումներու և յաճախակի անգթութեան զոհեր են : Մերսինի գլխաւոր թարգմանին , բանտի պահապաններուն , զինուորներուն և մասամբ ալ քաղաքի կառավարչին չարաչար վայրագութեանց զոհ զնաց հայ կին մը իր զաւայնեցող :

Այս կնոջ վրայ ի գործ դրուած վայրագութիւններու մասին , որուն միջոցին մէկ տղան անմիջական կերպով մեռած է կատարուած լիկուսներու պահուն , թղթակցին գրածը զանց կընենք , որովհետեւ անանկ բնաւորութիւն մը ունի , որ հոս զետեղել կարելի չէ :

Ամէն անգամ մենք շենք կը բարանակար հանդիսատես մնալ այս դժբախտութիւններուն որոնք մեր սրտին կը դաչին : Նամակին մէկ պատճէնը որ մենք ստացած են , կը զրկենք Օսմ. Բարձր. պատուիրակ Ահմէտ Մուխթար փաշայի , որուն արդարասէր միտքը և զգացմանց ազնուութիւնը մեզի լաւ ծանօթ է :

Օսմ. Բարձր. պատուիրակը ողբերգական այս իրողութեան պատմութիւնը պիտի հասցնէ անշուշտ Կ. Պոլիս , և մենք վըստահ ենք որ , երբ եղելութիւնը ճանչցուի պէտք եղած տեղէն , անմիջապէս հրամաններ կը արուին ( . . . ) առ որ անկէ , քննութիւններ կատարելու և յանցարեւերը պատժելու համար :

Քաղցր էր իրեն այդ սփոփիչ խօսքերը լսել , երբ յոյսն ալ զինքը կը լքանէր :

— Տես , Պրըշքով , յարեց ան , մուր Նայուածք մը նետելով — Ինչպէս հատուցանեմ քեզ , ես բան մը չունիմ : Ոչինչ , ոչինչ չունիմ . . . բացի պնակներէ , առոնք ալ բան մը չեն ալ ժեր : Գեղի յիշատակ մը թողու բան մը չունիմ :

— Կու օրինակ :

— Այո , հոն սնտուկին տակը կապոց մը ունիմ : Ծառանց հոն գրուած կապոց մը : Հոն շատ թանկագին երկու բան պահած եմ : Գեղի ալ թանկ ըլլան Պրըշքով : Բայց ո՞ւր են իմ ընկերներս : Ո՞ւր է Մարէտոսեֆին : Ո՞ւր է հաճին . . . կարծես , գնա հանէ առոնք , թող չի մեռած անգամ մըն ալ տեսնամ . . . Ա՛հ , հայրենիքի համար մեռնելը քաղցր է :

Պրըշքով գնաց բացաւ սնտուկը , մէջի եղածները տեսնելու : Յատակէն կապոց մը հանեց , որուն մէջ ծալուած էին քանի մը փափուկ բաներ : Զգուշութեամբ կապոցը քակեց և թուղթ մը ու բուրջ մը հանեց : Թուղթը 1867ին յեղափոխական կօմիտէին մէկ յիշատակագիրն էր :

**ԱԶՍՏԲԵՄ**

Պատճէն «Իրաւունք»-ի խմբագրութեան զրկուած հեռագրին :

Որովհետեւ չի բարեհաճեցաք սպել ձեր թերթին մէջ մեր կողմէ տրուած բացատրութիւնը ձեր 38 թիւ «Իրաւունք»-ի անգրըֆիլէին գէժ , որ զմեզ վատահամբաւելու հանգամանք ունէր , կը խնդրենք և կը պնդենք Տ. խմբագիր որ անպատճառ տրուած բացատրութիւնը անփոփոխ սպէք ձեր յառաջիկայ թիւին մէջ , սպագրական օրինաց տրամագրութեան համաձայն :

Ի գիմաց թատերասէր  
Մանախմբին  
Մ. ԶԳՕՆ

**ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ**

Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Մաղաբիա եպիս. Տէրունեան իր պաշտօնէն հրաժարելով մայիս 30ին Թիֆլիս հասեր է : Պարսից ճահը ինչպէս իր գոհունակութեան Մաղաբիա եպիսկոպոսին «Առիւծ և Արեգակ» շքանշանին առաջին աստիճանը շնորհեր է , զայն աշտանացներով այն պատուին՝ որուն կարժանանան արտակարգ դեսպանները : Այսպէսով ճահը անգամ մը եւս ցոյց տուած է իր բարեացակամութիւնը դէպի հայ ազգը : Մաղաբիա եպիսկոպոսի հրաժարմամբ Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդական աթոռը թափուր կը մնայ և պարսկահայերը կոչուած են նոր ընտրութիւն կատարելու : Պարսկաստանցիք իրենց առաջնորդ կուզեն

Իսկ քուրջը , հին դրօշի կտոր մը , որուն վրայ միայն մնացած էին կամ մահ տառերը :

Վե՛հ տօթիւմաններ , Ամբողջ մարմնովը դողդոց , Սթրանճան վեր ելլելով ձեռքը երկնցուց ու ըսաւ .

— Տուր , Պրըշքով ,

Երբ որ առաւ , համբուրեց ու յետոյ տկար ու կցկատուր ձայնով մը ըսաւ .

— Աս ինձմէ նուէր թող ըլլայ քեզի , Յիշէ՛ Սթրանճան : Մեծիք Պուլկարիոյ համար . . .

Երկու օր յետոյ քաջ գրօշակապետը մեռած էր :

Պրըշքով անոր աչքերը դոցեց , Անոր ամանները ու շիշերը ծախեց թաղման ծախսերը վճարելու համար : Միայն Պրըշքովն էր զայն գերեզման զրկողը :

Այսպէս կը վերջացնէին կեանքերն Պուլկարիոյ ազատութեան Արշալոյսին նախակարապետները :

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

անսովոր փայլ մը մը ստացած . ստակալի կերպով խորը ինկած էին իսկ այսին վրայ կապուեցած հին վէրքերը սկսեցին էին սեւանալ : Սթրանճան , որ Պրըշքովի անձնուրիւթիւնը կը դիտէր իր բոլոր ինքնագիտակցութեամբը աչքերէն քանի մը ժլատ արցունքներ կը հոսէին : Յաճախ Պրըշքովին կը պատմէր և միշտ Պալքանի կոնկրետներ կը պատմէր : Առ գիւցազնական օրերու յիշողութիւնները քիչ մը կը թեթեւցնէին իր ցաւերը , Լաւ կըմբռնէր որ չի պիտի կրնար ոտքի ելլել , բայց հպարտօրէն կը համբերէր , եւ մանուան կը սպասէր : Ենմիտիթար էր միայն անոր համար , որ մահը հոս պիտի գտնէր անշուք կապելային մէջ , եւ ոչ թէ կռուի դաշտը : Երբեմն միտքը կուգային առունը , իր ազգականները , կը յիշէր ատոնք և գարձեալ իր հայրուկային խոնկութեան մէջ կը սուզուէր Պրըշքով ամենայն ջերմեանով թեամբ զայն մտիկ կընէր : Աս ծերացած հերոսի աժգոյն շրթունքներէն ցայտած ամէն մէկ խօսքը , իրիւ սրբազան կապ կընդունէր : Սթրանճան կը սկսէր աւելի քիչ խօսիլ և աւելի շատ տանջուիլ , որովհետեւ իր հիւանդու-

թիւնը անգթաբար կը յառաջանար , Պրըշքով իր գլխուն մօտէն էր :

— Կտրիճ պատանի , ըսաւ անոր Սթրանճան անգամ մը , շնորհակալ եմ . . . շնորհակալ եմ . . . որ ինծի չի թողուցիր : Պուլկարի մը մօտ պիտի մեռնիմ եւ մէկը պիտի գտնուի մօտս աչքերս գոցելու . . . եւ ասի օտար հողի վրայ փափաքելի բան մըն է , ա՛հ հայրենիք :

— Մի խոսովիր , գոչեց պատանին կամացուկ մը . . . Հանդարտէ՛ , կը պազատիմ :

— Շնորհապարտ եմ , շնորհապարտ , սիրելի եղբայրս : Ես պիտի երթամ , ինծի համար այլեւս կեանք չը կայ :

— Չէ , անուղի փառաւոր պիտի մնայ : Դու ճշմարիտ գիւցազ մըն ես :

— Ա՛հ , Պրըշքով :

— Դուս գոնէ երջանիկ կը համարուիս , որ ճակատիգ վրայի փառաւոր սպիներովը եւ սրտիգ դեղեցիկ յիշատակներովը պիտի մեռնիս . . . Պուլկարիա իր քաջ գաւակները չի պիտի մոռնայ :

Արցունքը որդողեց Սթրանճանի երեսը , իր սկրուտ ձեռքերը երկնցուց և լուծով մը սեղմեց Պրըշքովին ձեռքը :

ունենալ Այվատեան Մահակ ե-  
պիսկոպոսը որ լու համբաւ շա-  
հած է ժողովրդին մօտ և պար-  
սից կառավարութեան առջեւ :

— Ժողովրդական ուսաց, հա-  
յոց և վրաց թատրոնի հաշիւ-  
ներու քննիչ յանձնաժողովին  
հրատարակած տեղեկագրէն կե-  
րեւայ որ, ժողովրդական հայոց  
թատրոնի անդամները 1900—901  
տարւոյն մէջ 25 հայերէն ներ-  
կայացում տուեր են, և այդ ներ-  
կայացումներուն յաճախեր են  
5922 անձ : Ժողովրդական թատ-  
րոնի անդամներն են. Տիկին  
Սրբուհի Աբրահամեան, Օր. Շահ-  
նազարեան, Օր. Վարսենի, Պ. Պ.  
ն. Աբրահամեան, Ա. Յարութիւն-  
եան, Ա. Ռափայէլեան, Խ. Տէր  
Մարքարեան, Ա. Երեցեան :

— «Մշակ» կը տեղեկանայ թէ  
Մոսկուայի Լազարեան ճեմարանի  
երրորդ մասնագիտական դասա-  
րանին մէջ, յառաջիկայ տարե-  
շրջանէն սկսեալ նոր աւարկայ  
մը պիտի դասախօսուի, այն է  
խալմական իրաւագիտութիւնը :

— Ամենաստոյգ ազբիւրներէ  
կը տեղեկանանք որ «Մշակի մէջ»  
Տիգրան Յովհաննէսեանի ակ-  
նարկած Սալմաստի Եէնիշերի-  
ները պէտք է Դաշնակցութենէն  
դուրս փնտռել :

Բոլոր այն թերթերը որոնք  
մատի փաթեթոց ընելով Սալմաս-  
տի վիճակը, Դաշնակցութեան  
կուզեն հարուածներ տեղալ, կամ  
քողի տակէ զայն վարկաբեկ ը-  
նելու աշխատիլ, պէտք է հա-  
մոզուին որ իրենց այդ խենթ  
զայրումներով ծիծաղելի կը  
դառնան միայն :

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Սուլթանը բացարձակապէս մեր-  
ժեր է Անգլիական ընկերութեան  
մը տալ Աքիաէն Դամասկոս եր-  
կաթուղի մը շինելու մենաշնոր-  
հը, որ արդէն նոյն ընկերու-  
թեան կանխապէս տրուած էր :  
Թուրք կառավարութիւնը կը զի-  
ջանի վճարել արդէն շինուած  
մէկ քունի քիլոմէթրներու ծախ-  
քը ու ինք կը ստանձնէ գծին ա-  
ւարտումը Դամասկոսը և Մէքքէն  
կապելու համար :

— Նովի Պազարի մէջ կարող վե-  
րահատաստուեր է, Խանութները  
կրկին բացուեր են, Իսլամ ժո-  
ղովրդին նոր քայմաքամ մը խօս-  
տացեր են : Այս խոսքով թեանց  
գլխաւոր շարժառիթը որ թուրք  
երեւելիի մը սպանումը եղած  
էր սերպերէն է չիկայ այլ եւս,  
որովհետեւ յայտնի եղած է թէ  
մարդասպանը ոչ թէ սերպ այլ  
իսլամ մըն է եղեր :

— Յառաջիկայ երկուշաբթի Սուլ-  
թանը իր ներկայութեան պիտի

ընդունի Յունաց նորընտիր պա-  
րիարքը Պատրիարքը պիտի այ-  
ցելէ յետոյ Բ. Դուռը, և ըստ  
հին սովորութեան պիտի կա-  
տարուին գահ բարձրանալու կրօ-  
նական արարողութիւնները և  
պատրիարքական նշաններու  
յանձնումը :

### Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Մեծ դուքս Ալէքսանտր Մի-  
քայիլովիչ յուլիս ամսոյն մէջ  
Սօֆիա պիտի այցելէ : Միւսնոյն  
ժամանակ Սեւ Մովու ռուսական  
նաւատորմի Պուրկազի առջեւ  
խարխու պիտի նետէ :

— Մակեդոնական կոմիտէի ար-  
դի նախագահ Սթօյան Միխաէ-  
լովօքի հրատարակային բանա-  
խօսութեան մը մէջ յայտներ է  
որ Ռուսոյ պաշտպանութիւնը  
կորսնցուցած են, որովհետեւ  
Պուլկարիոյ մեծութեան համար  
արտայայտուած իրաւաբաւ պե-  
տութեան կասկածը հրաւիրած  
են, Հետեւաբար Մակեդոնացիք  
պէտք է բոլորովին անջատեն  
իրենց դատը պուլկարական  
խնդրէն, իրենց սկզբունք ընտ-  
րելով Մակեդոնիան Մակեդո-  
նացիներուն բնաբանը :

Նախկին նախագահը Սարաֆօֆ  
թերթի մը ուղղած իր նամակին  
մէջ նոյնիմաստ յայտարարու-  
թիւն մը ըրեր է. աւելցնելով  
որ ինքն ալ ամէն ջանք ըրած է  
Մակեդոնական խնդիրը Պուլկա-  
րիոյ մեծացումի իղձերէն անկախ  
ցոյցնելու համար :

### Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Չարը վերջնականապէս ըն-  
դուներ է Կիյով կայսեր հրաւերը  
գերմանական բանակին Տանձիկի  
մէջ կատարելիք մեծ զօրահան-  
դէաներուն ներկայ գտնուելու  
մասին : Չարը Գօրէնհակ պիտի  
երթայ, ուրկէ Տանձիկ պիտի  
անցնի :

### Ս Ե Ր Պ Ի Ա

Ալէքսանտր թագաւորին և  
Տրակա թագուհւոյն Ռուսիա ճամ-  
բորգութիւնը որ բազմաթիւ ան-  
գամներ ծանուցուեցաւ և հեր-  
քուեցաւ, այս անգամ վերջնա-  
կանապէս ստուգուած է և տեղի  
ունենայ սեպտեմբեր ամսուն :  
Բեթերսպուրկի Սերպիական դես-  
պանին պաշտօնապէս հաղոր-  
դուած է թէ Չարը հաճութեամբ  
պիտի ընդունի սերպ վեհապե-  
տին այցելութիւնը :

### Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Քինո հալի մէջ ահագին մի-  
թինկ մը տեղի ունեցեր է ի  
նպաստ խաղաղութեան, 10,000 է  
տելի անձերու ներկայութեան :  
Սրահին բոլոր դռները ոտտի-  
կաններով պաշտպանուած էին :

Բազմաթիւ կիներ ու մարդիկ  
նուազեր են : Երբ առաջին ճա-  
ռախօսները բեմ ելեր են, ժողո-  
վորդը սկսեց է «Կէցցէ՛՛ Տրվէթ»  
աղագակել : Միթինկին նախա-  
գահը Լապուչէր խօսք առնելով  
ըսեր է թէ հայրենիքին ճշմա-  
րիտ դաւաճաններն կառավարու-  
թեան մարդիկն են, որոնք ցելի  
մէջ թաթխեցին Անգլիոյ անունն  
ու համբաւը :

Բազմաթիւ ատենախօսութիւն-  
ներէ ետքը, Լօյտ առաջարկի է  
որոշմագիր մը, որով կը բողո-  
քեն պատերազմին դէմ և կը պա-  
հանջեն որ պօսէրներուն առա-  
ջարկուի խաղաղութեան ընդու-  
նելի պայմաններ : Յետոյ կը պա-  
խարակեն Անգլիացոց գործա-  
ծած միջոցները կիներու և  
տղոց հանդէպ : Ուրիշ ատենա-  
խօս մը ներկայացուցեր է բողոք  
մը ազարակներու հրդեհումին և  
կանանց ու տղայոց գերութեան  
դէմ : Միթինկը ցրուելէ առաջ  
շնորհակալութեան ուղերձ մը  
քուէսրկեր է զայն սարքոյներուն  
և բաժնուեր՝ Մարտիլէզը եր-  
գելով :

— Կրտսի թէ Տրվէթ բանտար-  
կեր է իր զօրավարներէն մէկը,  
Ֆուրիէ, որ ուզած էր Անգլիաց-  
ոց անձնատուր ըլլալ :

— Տրվէթ փորձեր է անցնել  
Հայդէլպէրկի և Սթանտէրթընի  
զինուորական շղթան, բայց չէ  
յաջողած :

### Կ Ի Ե Տ Է

Աթէնքի մէջ այն կարծիքը  
կը տիրապետէ թէ իշխան Եօր-  
կիոս, պետութեանց պատասխա-  
նին վրայ, պիտի ընդունի իր  
պաշտօնը Կրէտէի մէջ, երեք  
տարուան նոր շրջանի մը հա-  
մար : Այն պարագային որ իշ-  
խանը մերժէ ու է պաշտօն ըն-  
դունիլ, կըսուի թէ Մօնթէնէ-  
կրօի Միրքօ իշխանը պիտի հրա-  
ւերուի, որ Խուսիոյ թագուհւոյն  
եղբայրն է :

— Անգլիացի հնաստիչ էվէնս  
յայտարարեր է կրետական խոր-  
հրդարանին թէ Միսոսի պալատը  
գտած է : Էվէնս կըսէ թէ անվի-  
ճելի ապացոյցներ ունի իր գի-  
տին ստուգութեան ի նպաստ :  
Շէնքին վրայ զանազան արձա-  
նագրութիւններ կան եղեր, ո-  
րոնք սեպտեմբեր գրեթե գործա-  
ծութենէն 600 տարի առաջ գըր-  
ուած են :

### Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Փանտախտը սկսած է արագօ-  
րէն տարածուիլ երկրին զանա-  
զան նաւահանդիստներուն մէջ,  
բաւական ծանր մտտաւնջութիւն  
պատճառելով տեղական բնակ-  
չութեան : Համաճարակին կեղ-  
րոնը Չակազիկն է, ուր 48 դէպք  
պատահած է յունիս ամսուն մէջ :

կառավարութիւնը կարեւոր վարկ  
մը բացած է համաճարակին դէմ  
կուռելու համար :

### Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Թիէն Լօ Սեանք անուն անձ մը  
բազմաթիւ պօքսէրներ և դասա-  
լիք զօրքեր հաւաքելով՝ համոզեր  
է շատ մը ամբապատ գիւղերու և  
քաղաքներու բնակիչները որոնք  
Բէշիլիի հարաւարեւմտեան կողմը  
կը բնակին, որպէս զի մերձեն  
վճարելու պահանջի համար հաստա-  
տուած նոր տուրքերը կը թէ  
Թիէն Լօ Սեանք արդէն վաներ է  
կայսերական շօրագունդերը և  
կը վախցուի որ շարժումը կը  
տարածուի դէպի նախ թուրք :

— Սուլթանը հրամայեր է Չի-  
նաստան մեկնած թուրք պատգա-  
մաւորութեան թուրքիա վերա-  
դառնալ :

— Ամերիկեան զօրավար Շաֆ-  
լինակակ կուռի վրայ տուած  
տեղեկագրին մէջ կը գատա-  
պարտէ այն շարքերը որոնք Բէ-  
քինի մէջ կատարուեր են : Չօ-  
րավարը կը յայտնէ թէ, մէկ  
պօքսէրի համար 50 անմեղներ  
որոնց մէջ կին և աղաքներ ալ  
կան, սուրէ անցեր են :

Ճարտի մէջ մետաքսի վրայ  
պատկեր մը շինուեր է, որ կը  
ներկայացնէ չինական քաղաքներ  
կողպտոյ երոպական զինուոր-  
ները, Պատկերին վրայ գրուած  
է եղեր «մարդասիրութիւն» կամ  
«քաղաքսիրութիւն» բառերը :

### Թ Ա Տ Ե Ր Ա Շ Ա Ր Բ Թ. Ֆ Ա Ս Ո Ւ Լ Ե Ա Ճ Ի Ա Ն Ի Ա

Տալը Միտի Անդհեր  
կատակախաղ մէկ արար  
Գին 1 ֆր.  
Գիմի Ն. Լեւոն դերձակ  
Թէֆֆիք փաշա փողոց  
(Եգիպտոս) Աղէքսանդրիա

### «ԺՈՂՈՎՈՒՐԻՆՆ ԶԱՄԱՐ»

Հանդիս անուայ  
Բովանդակութիւն Չրդ թիւին .  
Եւրոպան (Լեւոն Արսէնեան) . —  
Պատմական հայեացքներ (Գ. Փառ-  
նակ) . — Աստուածացումը (Աստմ  
Եարճանեան) . — Նոթատարքս (Չ.  
Վարսամեան) . — Չաւակը (Սուրէն  
Պարթեւեան) . — Այցելութիւնը (Վա-  
նան Տիրանեան) . — Հայուն ախտա-  
բանութիւնը (Տօթթ. Պ. Քօլօրեան) . —  
Իարեշըղում (Մ. Մ.) :  
Տարեկան բաժնեգրին է 10 ֆր.  
Հասցէ՝  
A. FORTIN 10 rue Dupont  
des Loges Paris VIIe

### ОТГОВОРНИКЪ: Д-ръ МѢТЪРДИЧЪ ВАРГАНЪ

Печ. Взаимность — Варна.